ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Հույս-Մոտոր ՍՊԸ-ն ՊՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-2026/27 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
4	BARS	BARS	BARS	ООО ТосолНН	Արգելակային հեղուկ DOT-4, սինթետիկ, գլիկոլային հիմքով, նախատեսված տրանսպորտային միջոցների հիդրավլիկ արգելակային և կցորդիչի համակարգերի համար, որտեղ արտադրողի կողմից թույլատրված է DOT-4 դասի արգելակային հեղուկի կիրառումը: Հեղուկը պետք է համապատասխանի FMVSS 116 DOT-4, SAE J1704 կամ ISO 4925 Class 4 ստանդարտներից առնվազն մեկին: Չոր եռման ջերմաստիճանը՝ ոչ պակաս 230°C: Խոնավ եռման ջերմաստիճանը՝ ոչ պակաս 155°C:

					Կինեմատիկական մածուցիկությունը -40°C-ի դեպքում՝ ոչ ավելի, քան 1800 մմ²/վ։ Կինեմատիկական մածուցիկությունը 100°C-ի դեպքում՝ ոչ պակաս 1.5 մմ²/վ։ pH ցուցանիշը՝ 7.0-11.5 միջակայքում։ Հեղուկը պետք է լինի թափանցիկ, առանց նստվածքի, առանց մեխանիկական խառնուրդների և առանց ջրի տեսանելի առկայության։ Գույնը՝ անգույնից մինչև սաթագույն՝ ըստ արտադրողի տեխնիկական փաստաթղթի։ Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված, գործարանային փակ և չվնասված փաթեթավորմամբ։ Փաթեթավորումը՝ 0.455 լ, 0.5 լ կամ 1 լ տարաներով։ Արտադրության ամսաթիվը՝ ոչ շուտ, քան 2026 թվականի հունվարի 1-ը։ Մասնակիցը հայտով պարտադիր ներկայացնում է առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, մակնիշը, արտադրողի անվանումը, արտադրության երկիրը, տարայի ծավալը, ինչպես նաև արտադրողի տեխնիկական թերթիկը կամ որակի անձնագիրը, որտեղ պետք է

						արտացոլված լինեն սույն տեխնիկական բնութագրով պահանջվող հիմնական ցուցանիշները: Մատակարարվող ապրանքի ապրանքային նշանը, մակնիշը, արտադրողը և տեխնիկական ցուցանիշները պետք է ամբողջությամբ համապատասխանեն մասնակցի հայտով ներկայացված ամբողջական նկարագրին և սույն տեխնիկական բնութագրին: Այլ ապրանքային նշանի, մակնիշի կամ արտադրողի ապրանքի մատակարարումը չի թույլատրվում: Պատվիրատուի մոտ հիմնավոր կասկած առաջանալու դեպքում Մատակարարը իր միջոցների հաշվին ապահովում է ապրանքի լաբորատոր փորձաքննությունը Պատվիրատուի կողմից նշված կամ հավատարմագրված լաբորատորիայում: Փորձաքննությամբ անհամապատասխանություն հայտնաբերվելու դեպքում ապրանքը համարվում է չմատակարարված, իսկ փորձաքննության, փոխարինման,

					տեղափոխման և այլ հարակից ծախսերը կրում է Մատակարարը։ Տեղափոխումն ու բեռնաթափումն իրականացվում է Մատակարարի միջոցներով և հաշվին։

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО УЙС-МОТОР в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՊՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-2026/27 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар				
	фирменное наименование	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
4					